

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը եւ Նիդերլանդների Թագավորությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,
ցանկանալով ամրապնդել իրենց ավանդական բարեկամական կապերը եւ ընդլայնել ու ակտիվացնել տնտեսական հարաբերությունները միմյանց միջեւ՝ մասնավորապես կապված մի Պայմանավորվող կողմի ներդրողների՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կատարած ներդրումների հետ,

ընդունելով, որ Համաձայնագրով ներդրումներին տրամադրվող ռեժիմը կխթանի կապիտալի ու տեխնոլոգիայի հոսքերը եւ Պայմանավորվող կողմերի տնտեսական զարգացումը, եւ այն, որ ներդրումներին արդար եւ հավասար ռեժիմի տրամադրումը ցանկալի է,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակներով.

ա) "ներդրումներ" տերմինը նշանակում է՝ ակտիվների բոլոր տեսակները, մասնավորապես, բայց ոչ բացառապես.

i) շարժական եւ անշարժ գույքը, ինչպես նաեւ գույքի բոլոր տեսակների հետ կապված ցանկացած այլ in rem իրավունքը,

ii) բաժնեմասերից, բաժնետոմսերից եւ ընկերություններում ու համատեղ ձեռնարկություններում այլ տեսակի մասնակցությունից բխող իրավունքները,

iii) դրամական, այլ գույքային կամ տնտեսական արժեք ունեցող ցանկացած պարտավորության գծով պահանջների իրավունքը,

iv) մտավոր սեփականության, տեխնիկական գործընթացների, բարի համբավի եւ նոու-հաուի ոլորտներում իրավունքները,

v) հանրային իրավունքով կամ կոնտրակտով տրամադրված իրավունքները՝ ներառյալ բնական պաշարների հետազոտման, արդյունահանման եւ հանքամշակման իրավունքները:

բ) "Ներդրողներ" տերմինը, կապված յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի հետ, ներառում է.

i) այն ֆիզիկական անձանց, որոնք այդ Պայմանավորվող կողմի քաղաքացիներ են,

ii) այն իրավաբանական անձանց, որոնք հիմնված են՝ համաձայն այդ

Պայմանավորվող կողմի օրենսդրության,

iii) այն իրավաբանական անձանց, որոնք այդ Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ չեն հիմնվել, սակայն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում են ֆիզիկական անձանց կողմից, ինչպես նշված է i եւ ii ենթակետում, կամ իրավաբանական անձանց կողմից, ինչպես նշված է ii ենթակետում:

գ) "Տարածք" տերմինը ընդգրկում է տարածքային ծովին հարակից ցանկացած տարածք, որը, համապատասխան պետության օրենսդրությամբ եւ միջազգային իրավունքին համապատասխան, այդ պետության սահմանափակ մուտքի իրավունքով տնտեսական գոտի է

կամ մայրցամաքային շելֆ, որի նկատմամբ այդ պետությունը ունի իրավասություն կամ ինքնիշխան իրավունքներ:

ՀՈԴՎԱԾ 2

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է իր օրենսդրության շրջանակներում խրախուսի տնտեսական համագործակցությունը իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումները պաշտպանելու միջոցով: Յուրաքանչյուր

Պայմանավորվող կողմ պետք է ընդունի այդ ներդրումները՝ իր օրենսդրությամբ սահմանված իրավասությունը իրականացնելու իր իրավունքի համաձայն:

ՀՈՂԿԱԾ 3

1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների համար երաշխավորի արդար եւ հավասար ռեժիմ եւ անհիմն կամ խտրական միջոցներով չպետք է վնասի այդ ներդրողների կողմից ներդրումների գործողության մեջ դրվելուն, կառավարմանը, պահպանմանը, օգտագործմանը, տիրապետմանը կամ տնօրինմանը: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է այդպիսի ներդրումներին տրամադրի ամբողջական նյութական ապահովվածություն եւ պաշտպանվածություն:

2) Մասնավորապես, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ այդպիսի ներդրումներին պետք է տրամադրի այնպիսի ռեժիմ, որը ցանկացած դեպքում չպետք է ավելի պակաս բարենպաստ լինի, քան այն ռեժիմն է, որը տրամադրում է իր ներդրողների ներդրումներին կամ ցանկացած երրորդ պետության ներդրողների ներդրումներին. նայած, թե որն է ավելի բարենպաստ այդ ներդրողների համար:

3) Եթե Պայմանավորվող կողմը հատուկ առավելություններ է տրամադրել որեւէ երրորդ պետության ներդրողներին, որոնք բխում են մաքսային միությունների, տնտեսական միությունների, արժույթային միությունների կամ նմանատիպ կազմակերպություններ հիմնող համաձայնագրերից կամ նման միությունների կամ կազմակերպությունների հիմնումը նախատեսող ժամանակավոր համաձայնագրերից, ապա այդ Պայմանավորվող կողմը պարտավորություն չի ստանձնում նմանատիպ առավելություններ տրամադրել մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին:

4) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ուսումնասիրի ցանկացած պարտավորություն, որն ինքը կարող է ստանձնել մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների առնչությամբ:

5) Եթե Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության դրույթները կամ միջազգային իրավունքով գոյություն ունեցող կամ հետագայում, ի լրումն սույն Համաձայնագրի, Պայմանավորվող կողմերի միջեւ հաստատվող պարտավորությունները պարունակում են ընդհանուր կամ հատուկ կարգ, որը մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին տրամադրում է ավելի բարենպաստ ռեժիմ, քան նախատեսված է սույն Համաձայնագրով, ապա այդպիսի կարգը գերակա է սույն Համաձայնագրի նկատմամբ այնքանով, որքանով այն ավելի բարենպաստ է:

ՀՈՂԿԱԾ 4

Կապված հարկերի, վճարների, ծախսերի եւ ֆինանսական հանումների եւ ազատումների հետ՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին, որոնք ներգրավված են ցանկացած տնտեսական գործունեության մեջ իր տարածքում, տրամադրի այնպիսի ռեժիմ, որը ոչ պակաս բարենպաստ է, քան այն ռեժիմն է, որը նա տրամադրում է իր կամ ցանկացած երրորդ պետության ներդրողներին, որոնք նույն պայմաններում են գտնվում. նայած, թե որն է ավելի բարենպաստ այդ ներդրողների համար: Այդ նպատակով, այնուամենայնիվ, չպետք է հաշվի առնվի ցանկացած հատուկ ֆինանսական առավելությունը՝ տրամադրված այդ կողմի կողմից.

- ա) համաձայն կրկնակի հարկումից խուսափելու համաձայնագրի, կամ
- բ) կապված մաքսային միությանը, տնտեսական միությանը կամ համանման միությանը իր մասնակցության հետ, կամ
- գ) երրորդ պետությանը՝ փոխադարձության հիման վրա:

ՀՈՂԿԱԾ 5

Պայմանավորվող կողմերը պետք է երաշխավորեն, որ ներդրումների հետ կապված

վճարումները կարող են փոխանցվել: Փոխանցումները պետք է կատարվեն ազատ փոխարկելի տարադրամով՝ առանց սահմանափակման կամ ուշացման: Այդպիսի փոխանցումները ներառում են, մասնավորապես, բայց ոչ բացառապես.

- ա) շահույթը, տոկոսները, շահաբաժինները եւ այլ ընթացիկ եկամուտները,
- բ) դրամական միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝
 - i) հումքի կամ օժանդակ նյութերի, կիսապատրաստի կամ պատրաստի արտադրանքի ձեռքբերման համար, կամ
 - ii) հիմնական ակտիվները ներդնելու համար՝ ներդրման շարունակականությունը ապահովելու նպատակով,
- գ) լրացուցիչ միջոցները, որոնք անհրաժեշտ են ներդրումների շարունակման համար,
- դ) փոխառությունների դիմաց վճարումները,
- ե) ռոյալթիները կամ վարձավճարները,
- զ) ֆիզիկական անձանց շահույթները, որոնք օրինականորեն ստացվել են որպես ներդրման արդյունք կամ որպես աշխատանքի դիմաց վճար,
- է) ներդրումների վաճառքից կամ լուծարումից ստացված հասույթները,
- ը) վճարները, որոնք բխում են 7-րդ հոդվածից:

ՀՈԴՎԱԾ 6

Ոչ մի Պայմանավորվող կողմ չպետք է ձեռնարկի որեւէ միջոցառում, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կզրկի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին իրենց ներդրումներից, եթե չեն ապահովվել հետեւյալ պայմանները.

- ա) միջոցառումները ձեռնարկվել են՝ ելնելով հանրային շահերից եւ օրենսդրության համապատասխան,
 - բ) միջոցառումները խտրական կամ հակասող չեն այն Պայմանավորվող կողմի որեւէ պարտավորությանը, որի նկատմամբ ձեռնարկվող միջոցառումները կիրառվում են,
 - գ) միջոցառումները ձեռնարկվելու են արագ, համարժեք եւ արդյունավետ փոխհատուցմամբ. այն դեպքում, երբ այդ միջոցառումները իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում, վճարվում է նախնական փոխհատուցում:
- Այսպիսի փոխհատուցումը պետք է համարժեք լինի այդ ներդրման իրական արժեքին, պետք է ներառի նորմալ առեւտրային տոկոսադրույք՝ հաշվարկված մինչեւ վճարման օրը, եւ պետք է, որպեսզի արդյունավետ լինի հայցվորների համար, առանց ուշացման վճարվի եւ փոխանցվի հայցվորների կողմից ընդունելի երկիր եւ այն երկրի արժույթով, որի ներդրողներն են հայցվորները, կամ հայցվորների կողմից ընդունելի ցանկացած ազատ փոխարկելի տարադրամով:

ՀՈԴՎԱԾ 7

Մի Պայմանավորվող կողմի ներդրողներին, որոնք կորուստներ են կրում, կապված մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կատարած իրենց ներդրումների հետ, պատերազմի կամ այլ զինված ընդհարման, հեղափոխության, արտակարգ իրավիճակների, խռովության կամ ապստամբության հետեւանքով, պետք է այդ մյուս Պայմանավորվող կողմի կողմից տրամադրվի այնպիսի ռեժիմ, կապված կորուստների վերականգնման, վնասների հատուցման կամ հարցը այլ կերպ կարգավորելու հետ, որը կլինի ոչ պակաս բարենպաստ, քան այն ռեժիմն է, որը այդ Պայմանավորվող կողմը տրամադրում է իր կամ որեւէ երրորդ պետության ներդրողներին. նայած, թե որն է ավելի բարենպաստ ներդրողների համար:

ՀՈԴՎԱԾ 8

Եթե մի Պայմանավորվող կողմի ներդրողի ներդրումները ապահովագրված են ոչ առեւտրային ռիսկերից, կամ այդ ներդրումների հետ կապված օրենսդրությամբ կամ կառավարական պայմանագրով այլ կերպ է նախատեսվում փոխհատուցման վճարումը, ապա

մյուս Պայմանավորվող կողմը ճանաչում է սուբբոզացիայի իրավունքով այդ ներդրողի իրավունքների փոխանցումը ապահովագրողին, վերաապահովագրողին կամ վերոհիշյալ Պայմանավորվող կողմից նշանակված գործակալությանը՝ համաձայն այդ ապահովագրման պայմանների կամ որեւէ այլ երաշխիքի:

ՀՈԴՎԱԾ 9

1. Ցանկացած վեճ, որը կարող է ծագել մի Պայմանավորվող կողմի ներդրողի եւ մյուս Պայմանավորվող կողմի միջեւ՝ կապված այդ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կատարված ներդրման հետ, հնարավորության դեպքում պետք է կարգավորվի բարեկամաբար՝ բանակցությունների միջոցով:

2. Ծանուցումը ներկայացնելուց հետո երեք ամսվա ընթացքում վեճի կողմերի միջեւ ուղղակի համաձայնությամբ վեճի բարեկամական կարգավորման կամ դիվանագիտական ուղիներով հաշտեցման անհնարինության դեպքում վեճը ներդրողի հայեցողությամբ ներկայացվում է կամ այն պետության իրավասու դատարանին, որտեղ կատարվել է ներդրումը, կամ միջազգային միջնորդ դատարանի քննմանը: Այդ դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նախապես եւ անվերապահորեն համաձայնվում է կարգավորել ցանկացած վեճ այդ տիպի միջնորդ դատավարության միջոցով: Այդպիսի համաձայնությունը ենթադրում է, որ երկու Պայմանավորվող կողմերը հրաժարվում են պահանջել, որ սպառված լինեն վեճի կարգավորման բոլոր ներքին վարչական կամ դատական միջոցները:

3. Միջազգային միջնորդ դատավարության դեպքում մի Պայմանավորվող կողմի եւ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջեւ վեճերը՝ կապված առաջինը նշված Պայմանավորվող կողմի՝ սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորության հետ, որը վերաբերում է վերջինը նշված Պայմանավորվող կողմի ներդրողի ներդրմանը, պետք է, համապատասխան ներդրողի խնդրանքով, կարգավորելու կամ համաձայնություն ձեռք բերելու նպատակով ներկայացվեն ներդրումների վերաբերյալ վեճերի կարգավորման միջազգային կենտրոն, որը գործում է "Պետությունների եւ այլ պետությունների քաղաքացիների միջեւ ներդրումների վերաբերյալ վեճերի կարգավորման մասին" Կոնվենցիայի հիման վրա, որը բաց է ստորագրման համար 1965 թ. մարտի 18-ից՝ Վաշինգտոնում:

Քանի դեռ Հայաստանի Հանրապետությունը չի դարձել վերոհիշյալ Կոնվենցիայի պայմանավորվող պետություն, ներդրումների վերաբերյալ վեճերը պետք է ներկայացվեն ներդրումների վերաբերյալ վեճերի կարգավորման միջազգային կենտրոն՝ նրա քարտուղարության կողմից իրականացվող ընթացակարգերի կարգավորման լրացուցիչ պայմանները կարգավորող կանոնների (լրացուցիչ պայմանների կանոններ) համաձայն:

4. Իրավաբանական անձը, որը հանդիսանում է մի Պայմանավորվող կողմի քաղաքացի, եւ որը նախքան նման վեճի ծագումը վերահսկվում էր մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների կողմից, նշված Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 2-րդ կետի "բ" ենթակետին համապատասխան եւ այդ Կոնվենցիայի նպատակով պետք է օգտվի մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացուն տրվող ռեժիմից:

5. Միջնորդ դատարանի վճիռը վերջնական է եւ պարտադիր վեճի կողմերի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պարտավորվում է իրականացնել վճիռն իր ներքին օրենսդրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագրի դրույթները դրա ուժի մեջ մտնելու օրվանից պետք է կիրառվեն նաեւ այն ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են մինչեւ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը:

ՀՈԴՎԱԾ 11

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է առաջարկել մյուս Կողմին

խորհրդակցություններ անցկացնել սույն Համաձայնագրի մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող ցանկացած հարցի շուրջ: Մյուս Կողմը պետք է պատրաստակամություն հայտնի եւ համապատասխան հնարավորություն ստեղծի այդ խորհրդակցությունների անցկացման համար:

ՀՈԴՎԱԾ 12

1. Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող ցանկացած վեճ, որը ընդունելի ժամանակահատվածի ընթացքում չի կարող կարգավորվել դիվանագիտական բանակցությունների միջոցներով, եթե Կողմերի միջև այլ համաձայնություն ձեռք չի բերվել, Կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով կներկայացվի երեք անդամներից կազմված միջնորդ դատարանին: Յուրաքանչյուր Կողմ կնշանակի մեկ միջնորդ դատավորի, եւ այդ նշանակված երկու դատավորները կնշանակեն երրորդ դատավորին՝ որպես նախագահի, որը Կողմերից որեւէ մեկի քաղաքացի չէ:

2. Եթե Կողմերից մեկը մյուս Կողմի՝ այդպիսի նշանակում կատարելու հրավերից հետո երկու ամսվա ընթացքում չի նշանակում իր դատավորին, այդ մյուս Կողմը կարող է հրավիրել Արդարադատության միջազգային դատարանի նախագահին՝ կատարելու անհրաժեշտ նշանակումը:

3. Եթե երկու դատավորներն իրենց նշանակումից հետո երկու ամսվա ընթացքում համաձայնության չեն գալիս երրորդ դատավորի ընտրության հարցում, յուրաքանչյուր Կողմ կարող է հրավիրել Արդարադատության միջազգային դատարանի նախագահին՝ կատարելու անհրաժեշտ նշանակումը:

4. Եթե սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված դեպքերում Արդարադատության միջազգային դատարանի նախագահը չի կարող կատարել նշված նշանակումները, կամ նա Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացի է, նախագահի տեղակալը կիրավիրվի՝ կատարելու անհրաժեշտ նշանակումները: Եթե նախագահի տեղակալը չի կարող կատարել նշված նշանակումները, կամ նա Կողմերից մեկի քաղաքացի է, դատարանի ամենաավագ անդամը, որը Կողմերից որեւէ մեկի քաղաքացի չէ, կիրավիրվի՝ կատարելու անհրաժեշտ նշանակումները:

5. Միջնորդ դատարանը որոշումը ընդունում է օրենքի հիման վրա: Մինչեւ դատարանի կողմից որոշում ընդունվելը դատարանը դատավարության որեւէ փուլում կարող է Կողմերին առաջարկել վեճը կարգավորել բարեկամաբար: Վերոհիշյալ դրույթները չպետք է խոչընդոտեն վեճի կարգավորմանը *ex aequo et bono*, եթե Կողմերը համաձայնել են դրան:

6. Եթե Կողմերը այլ բան չեն որոշել, միջնորդ դատարանն ինքը կսահմանի դատավարության ընթացակարգը:

7. Միջնորդ դատարանը իր որոշումը կայացնում է ձայների մեծամասնությամբ: Այդ որոշումը վերջնական է եւ Կողմերի համար պարտադիր:

ՀՈԴՎԱԾ 13

Կապված Նիդերլանդների Թագավորության հետ՝ սույն Համաձայնագիրը կկիրառվի Թագավորության՝ Եվրոպայի տարածքում, Նիդերլանդական Անթիլիասում եւ Արուբայում, եթե 14-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված ծանուցումը այլ բան չի նախատեսում:

ՀՈԴՎԱԾ 14

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի՝ սահմանադրորեն պահանջվող ընթացակարգերի ավարտի մասին միմյանց գրավոր ծանուցելու օրվանից երկրորդ ամսվա առաջին օրը եւ ուժի մեջ կմնա տասնհինգ տարվա ընթացքում:

2. Եթե սույն Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ Պայմանավորվող կողմերից որեւէ մեկը չի ներկայացնում ծանուցում այն

դադարեցնելու մասին, ապա սույն Համաձայնագրի գործողության ժամկետը ամեն անգամ երկարաձգվում է տասը տարով. այնուամենայնիվ, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի դադարեցնելու Համաձայնագիրը՝ գործողության ընթացիկ ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ ծանուցելով:

3. Այն ներդրումների նկատմամբ, որոնք կկատարվեն մինչև սույն Համաձայնագրի գործողության դադարեցման օրը, սույն Համաձայնագրի բոլոր հոդվածները կշարունակեն գործել նշված ժամկետից հետո հաջորդ տասնհինգ տարիների ընթացքում:

4. Սույն հոդվածի 2-րդ կետի բովանդակության հետ կապված՝ Նիդերլանդների Թագավորությունը իրավունք կունենա դադարեցնելու սույն Համաձայնագրի կիրառումը Թագավորության ցանկացած առանձին տարածքի նկատմամբ:

Ի վկայություն վերոհիշյալի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալ ներկայացուցիչները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երեւան քաղաքում, 2005 թ. հունիսի 10-ին, երկու բնօրինակով, հայերեն, հոլանդերեն եւ անգլերեն. երեք տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանության ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. օգոստոսի 1-ից:

ՀՀԱԳՆՊՏ 2006/ 8(16), ԵՄՊ, 28.12.05, անգլերեն բաժին, հոդ. 16

AGREEMENT

On encouragement and protection of investments between the Republic of Armenia and the Kingdom of the Netherlands

The Republic of Armenia and the Kingdom of the Netherlands, hereinafter referred to as the Contracting Parties,

Desiring to strengthen their traditional ties of friendship and to extend and intensify the economic relations between them, particularly with respect to investments by the investors of one Contracting Party in the territory of the other Contracting Party,

Recognising that agreement upon the treatment to be accorded to such investments will stimulate the flow of capital and technology and the economic development of the Contracting Parties and that fair and equitable treatment of investments is desirable,

Have agreed as follows:

Article 1

For the purposes of this Agreement:

(a) the term "investments" means every kind of asset and more particularly, though not exclusively:

(i) movable and immovable property as well as any other rights in rem in respect of every kind of asset;

(ii) rights derived from shares, bonds and other kinds of interests in companies and joint ventures;

(iii) claims to money, to other assets or to any performance having an economic value;

(iv) rights in the field of intellectual property, technical processes, goodwill and know-how;

(v) rights granted under public law or under contract, including rights

to prospect, explore, extract and win natural resources.

(b) the term "investors" shall comprise with regard to either Contracting Party:

(i) natural persons having the nationality of that Contracting Party;
(ii) legal persons constituted under the law of that Contracting Party;
(iii) legal persons not constituted under the law of that Contracting Party but controlled, directly or indirectly, by natural persons as defined in (i) or by legal persons as defined in (ii).

(c) the term "territory" includes any area adjacent to the territorial sea which, under the laws of the State concerned, and in accordance with international law, is the exclusive economic zone or continental shelf of the State concerned, in which it exercises jurisdiction or sovereign rights.

Article 2

Either Contracting Party shall, within the framework of its laws and regulations, promote economic cooperation through the protection in its territory of investments of investors of the other Contracting Party. Subject to its right to exercise powers conferred by its laws or regulations, each Contracting Party shall admit such investments.

Article 3

1) Each Contracting Party shall ensure fair and equitable treatment of the investments of investors of the other Contracting Party and shall not impair, by unreasonable or discriminatory measures, the operation, management, maintenance, use, enjoyment or disposal thereof by those investors. Each Contracting Party shall accord to such investments full physical security and protection.

2) More particularly, each Contracting Party shall accord to such investments treatment which in any case shall not be less favourable than that accorded either to investments of its own investors or to investments of investors of any third State, whichever is more favourable to the investor concerned. 3) If a Contracting Party has accorded special advantages to investors of any third State by virtue of agreements establishing customs unions, economic unions, monetary unions or similar institutions, or on the basis of interim agreements leading to such unions or institutions, that Contracting Party shall not be obliged to accord such advantages to investors of the other Contracting Party.

4) Each Contracting Party shall observe any obligation it may have entered into with regard to investments of investors of the other Contracting Party.

5) If the provisions of law of either Contracting Party or obligations under international law existing at present or established hereafter between the Contracting Parties in addition to the present Agreement contain a regulation, whether general or specific, entitling investments by investors of the other Contracting Party to a treatment more favourable than is provided for by the present Agreement, such regulation shall, to the extent that it is more favourable, prevail over the present Agreement.

Article 4

With respect to taxes, fees, charges and to fiscal deductions and

exemptions, each Contracting Party shall accord to investors of the other Contracting Party who are engaged in any economic activity in its territory, treatment not less favourable than that accorded to its own investors or to those of any third State who are in the same circumstances, whichever is more favourable to the investors concerned. For this purpose, however, there shall not be taken into account any special fiscal advantages accorded by that Party:

- a) under an agreement for the avoidance of double taxation; or
- b) by virtue of its participation in a customs union, economic union or similar institution; or
- c) on the basis of reciprocity with a third State.

Article 5

The Contracting Parties shall guarantee that payments relating to an investment may be transferred. The transfers shall be made in a freely convertible currency, without restriction or delay. Such transfers include in particular though not exclusively:

- a) profits, interests, dividends and other current income;
- b) funds necessary
 - (i) for the acquisition of raw or auxiliary materials, semi-fabricated or finished products, or
 - (ii) to replace capital assets in order to safeguard the continuity of an investment;
- c) additional funds necessary for the development of an investment;
- d) funds in repayment of loans;
- e) royalties or fees;
- f) earnings of natural persons legally gained as a result of investment or as a payment for labour;
- g) the proceeds of sale or liquidation of the investment;
- h) payments arising under Article 7.

Article 6

Neither Contracting Party shall take any measures depriving, directly or indirectly, investors of the other Contracting Party of their investments unless the following conditions are complied with:

- a) the measures are taken in the public interest and under due process of law;
- b) the measures are not discriminatory or contrary to any undertaking which the Contracting Party which takes such measures may have given;
- c) the measures are taken against prompt, adequate and effective compensation and in case these measures are carried out in the Republic of Armenia compensation is paid in advance. Such compensation shall represent the genuine value of the investments affected, shall include interest at a normal commercial rate until the date of payment and shall, in order to be effective for the claimants, be paid and made transferable, without delay, to the country designated by the claimants concerned and in the currency of the country of which the claimants are investors or in any freely convertible currency accepted by the claimants.

Article 7

Investors of the one Contracting Party who suffer losses in respect of

their investments in the territory of the other Contracting Party owing to war or other armed conflict, revolution, a state of national emergency, revolt, insurrection or riot shall be accorded by the latter Contracting Party treatment, as regards restitution, indemnification, compensation or other settlement, no less favourable than that which that Contracting Party accords to its own investors or to investors of any third State, whichever is more favourable to the investors concerned.

Article 8

If the investments of an investor of the one Contracting Party are insured against non-commercial risks or otherwise give rise to payment of indemnification in respect of such investments under a system established by law, regulation or government contract, any subrogation of the insurer or re-insurer or Agency designated by the one Contracting Party to the rights of the said investor pursuant to the terms of such insurance or under any other indemnity given shall be recognised by the other Contracting Party.

Article 9

1. Any dispute which may arise between an investor of one Contracting Party and the other Contracting Party in connection with an investment in the territory of that other Contracting Party shall, if possible, be settled amicably by negotiations.

2. In the absence of an amicable settlement by direct agreement between the parties to the dispute or by conciliation through diplomatic channels within three months from notification, the dispute shall be submitted, at the option of the investor concerned, either to the competent court of the State where the investment was made, or to international arbitration.

To this end, each Contracting Party consents in advance and irrevocably to the settlement of any dispute by this type of arbitration. Such consent implies that both Contracting Parties waive the right to demand that all domestic administrative or judicial remedies should be exhausted.

3. In case of international arbitration, disputes between one Contracting Party and an investor of the other Contracting Party concerning an obligation of the former under this agreement in relation to an investment of the latter, shall at the request of the investor concerned be submitted to the International Centre for Settlement of Investment Disputes, for settlement by arbitration or conciliation under the Convention on the Settlement of Investment Disputes between States and Nationals of other States, opened for signature at Washington on 18 March 1965.

As long as the Republic of Armenia has not become a Contracting State to the above mentioned Convention, investment disputes shall be submitted to the International Centre for Settlement of Investment Disputes under the Rules Governing the Additional Facility for the Administration of Proceedings by the Secretariat of the Centre (Additional Facility Rules).

4. A legal person, which is a national of one Contracting Party and which before such a dispute arises is controlled by nationals of the other Contracting Party, shall in accordance with Article 25 (2) (b) of the Convention for the purpose of the Convention be treated as a national of the other Contracting Party.

5. The arbitral award shall be final and binding on the parties to the dispute. Each Contracting Party undertakes to execute the awards under domestic law.

Article 10

The provisions of this Agreement shall, from the date of entry into force thereof, also apply to investments, which have been made before that date.

Article 11

Either Contracting Party may propose to the other Party that consultations be held on any matter concerning the interpretation or application of the Agreement. The other Party shall accord sympathetic consideration to the proposal and shall afford adequate opportunity for such consultations.

Article 12

1) Any dispute between the Contracting Parties concerning the interpretation or application of the present Agreement, which cannot be settled within a reasonable lapse of time by means of diplomatic negotiations, shall, unless the Parties have otherwise agreed, be submitted, at the request of either Party, to an arbitral tribunal, composed of three members. Each Party shall appoint one arbitrator and the two arbitrators thus appointed shall together appoint a third arbitrator as their chairman who is not a national of either Party.

2) If one of the Parties fails to appoint its arbitrator and has not proceeded to do so within two months after an invitation from the other Party to make such appointment, the latter Party may invite the President of the International Court of Justice to make the necessary appointment.

3) If the two arbitrators are unable to reach agreement, in the two months following their appointment, on the choice of the third arbitrator, either Party may invite the President of the International Court of Justice to make the necessary appointment.

4) If, in the cases provided for in the paragraphs (2) and (3) of this Article, the President of the International Court of Justice is prevented from discharging the said function or is a national of either Contracting Party, the Vice-President shall be invited to make the necessary appointments. If the Vice-President is prevented from discharging the said function or is a national of either Party the most senior member of the Court available who is not a national of either Party shall be invited to make the necessary appointments.

5) The tribunal shall decide on the basis of respect for the law. Before the tribunal decides, it may at any stage of the proceedings propose to the Parties that the dispute be settled amicably. The foregoing provisions shall not prejudice settlement of the dispute *ex aequo et bono* if the Parties so agree.

6) Unless the Parties decide otherwise, the tribunal shall determine its own procedure.

7) The tribunal shall reach its decision by a majority of votes. Such decision shall be final and binding on the Parties.

Article 13

As regards the Kingdom of the Netherlands, the present Agreement shall apply to the part of the Kingdom in Europe, to the Netherlands Antilles and to Aruba, unless the notification provided for in Article 14, paragraph (1) provides otherwise.

Article 14

1) The present Agreement shall enter into force on the first day of the second month following the date on which the Contracting Parties have notified each other in writing that their constitutionally required procedures have been complied with, and shall remain in force for a period of fifteen years.

2) Unless notice of termination has been given by either Contracting Party at least six months before the date of the expiry of its validity, the present Agreement shall be extended tacitly for periods of ten years, whereby each Contracting Party reserves the right to terminate the Agreement upon notice of at least six months before the date of expiry of the current period of validity.

3) In respect of investments made before the date of the termination of the present Agreement, the foregoing Articles shall continue to be effective for a further period of fifteen years from that date. 4) Subject to the period mentioned in paragraph (2) of this Article, the Kingdom of the Netherlands shall be entitled to terminate the application of the present Agreement separately in respect of any of the parts of the Kingdom.

IN WITNESS WHEREOF, the undersigned representatives, duly authorised thereto, have signed the present Agreement.

DONE in two originals at Yerevan, on 10 June 2005, in the Armenian, Netherlands and English languages, the three texts being authentic. In case of difference of interpretation the English text will prevail.

The Agreement has entered into force on 01.08.2006.